ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ





2016
ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՆՈՐՔ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ





Հարգելի՛ համաքաղաքացիներ,

2016 թվականն ամփոփում ենք նոր և համարձակ նախաձեռնություններով, ծավալուն նախագծերով և քաղաքային կառավարման ոլորտում որոշումների կայացման գործընթացին մեր համաքաղաքացիների ակտիվ մասնակցությամբ: Տարվա ընթացքում իրականացված բոլոր աշխատանքները հնարավոր եղավ կյանքի կոչել միայն համատեղ ջանքերի և փոխադարձ վստահության շնորհիվ: Ավանդական դարձած այս հաշվետվության միջոցով նպատակ ունենք մեկ անգամ ևս ընդգծելու, որ մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին:

Նախորդ տարիներին իրականացված ծրագրերն այս տարի համալրեցինք նոր և լայնամասշտաբ նախաձեռնություններով. բարեկարգեցինք այգիներ, պուրակներ, փողոցներ ու բակային տարածքներ, կառուցեցինք նոր խաղահրապարակներ ու ժամանցի վայրեր: Շարունակեցինք կարգի բերել ու ավելացնել քաղաքային լուսավորությունը, ոռոգման ցանցերը, ընդլայնել ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները, և, իհարկե, կարողացանք վերանորոգել շենքեր, կրթության, մշակույթի ու մարզական օջախներ:

Տարվա ընթացքում կատարված բոլոր աշխատանքների հիմքում եղել է և շարունակում է մնալ մայրաքաղաքի համաչափ զարգացումը, արժանավայել քաղաքային միջավայրի ապահովումն ու մեր սերունդներին կանաչ Երևան ժառանգելու տեսլականը: Ուրախալի է, որ քաղաքում կատարվող դրական փոփոխությունները մեր համաքաղաքացիների համար ոչ միայն ակնառու, այլև «սովորական» դարձան: Այսօր արդեն մեզանից ոչ ոք այլևս չի պատկերացնում քաղաքային միջավայրն ու առօրյան առանց այդ փոփոխությունների և զարգացումների:

Մայրաքաղաք Երևանի սիրելի՛ բնակիչներ, համոզվա՛ծ եմ, որ հաջորդող տարիներին ևս նույն նվիրումով, սրտացավությամբ և հետևողականությամբ մենք միասին շարունակելու ենք կյանքի կոչել իրատեսական ծրագրեր՝ ապահովելով մայրաքաղաքի կայուն զարգացումը:

Երևանի քաղաքապետ՝
ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ



Նոր Նորք վարչական շրջանի սիրելի՛ բնակիչներ,

ողջունում եմ բոլորիդ և ուրախությամբ ուզում եմ փաստել, որ 2016 թվականը նույնպես մեր վարչական շրջանի համար արձանագրեց դրական տեղաշարժեր և բարեփոխումներ: Բոլոր այն ձեռքերում-ները, հաջողությունները, որոնք գրանցվել են այս տարվա ընթացքում, ոչ միայն մեր աշխատակազմի, այլև յուրաքանչյուրիդ սրտացավ ու հոգատար վերաբերմունքի արդյունքն են: Վարչական շրջանում տարեցտարի իրականացվող բարեկարգման տարաբնույթ ծրագրերի շնորհիվ այսօր Նոր Նորքը զարգացման կայուն ուղի է որդեգրել: Մենք շարունակում ենք հաշվետու լինել մեր բնակիչներին և այս ձեռնարկով ձեզ ենք ներկայացնում 2016 թվականին մեր վարչական շրջանում արված աշխատանքների, իրականացված ծրագրերի մասին տեղեկատվությունը: Վստահ եղեք, որ առաջիկա տարիներին ևս կիրագործվեն նորանոր ծրագրեր՝ միտված մեր բնակչության համար առավել բարեկեցիկ ու հարմարավետ միջավայրի ապահովմանը:

Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար՝
Արմեն Ուլիխանյան






Ավելի հարմարավետ, ավելի մատչելի քաղաքային միջավայր

2016թ. Նոր Նորք վարչական շրջանում իրականացվել են.

- փողոցների և բակերի ասֆալտապատում՝ **99 000մ²,**
- մայթերի, պուրակների սալիկապատում՝ **1 100մ²,**
- եզրաքարերի փոխարինում՝ **1 500մ,**
- թեքահարթակների կառուցում և վերանորոգում՝ **4 հատ:**




Վարչական շրջանում ևս 7 հասցե ապահովվել է **1400** մ երկարությամբ լուսավորության ցանցով:





- «Նոր Նորք կանաչապատում» ՓԲԸ կողմից 2016թ. վարչական շրջանում վերանորոգվել է **850 գծմ** ոռոգման ցանց, անցկացվել է **1 050 գծմ** ոռոգման նոր ցանց:

- Կատարվել է սիզամարգերի ցանք՝ 24 855 քմ, ծաղկանոցներում ծաղկասածիլների տնկում՝ 164270 հատ, վարդանոցներում վարդերի տնկում՝ 3 700 հատ, ծառերի ձևավորում, երիտասարդացում և սանիտարական մաքրում՝ 3 400 հատ:











2016թ Նոր Նորքում սփեղծվել են նոր հանգստի գոտիներ

- Դ. Մալյան 20 շենքի հարակից տարածքում 200 մ^2,
- Ա. Միկոյանի անվան հ.166 դպրոցի և հ.111 մանկապարտեզի միջնամասում՝ 800մ^2,
- Գյուրջյան 5 և 9 շենքերի հարևանությամբ՝ 600մ^2:




ԲՆԱԿՖՈՆԴԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Վարչական շրջանի ծրագրով կատարվել են

- 106 մուտքերի վերանորոգման աշխատանքներ,
- 9000 մ^2 հարթ տանիքների վերանորոգման աշխատանքներ,
- 25 վթարային պատշգամբների ամրացման և վերանորոգման աշխատանքներ,
- 6 վերելակների հիմնանորոգման աշխատանքներ:

Համափրությունների միջոցներով կատարվել են 6 230 մ^2 հարթ և 5 674 մ^2 թեք տանիքների վերանորոգման աշխատանքներ: Վարչական շրջանի և համափրությունների հետ համատեղ կատարվել են 1 500 մ^2 թեք տանիքների վերանորոգման 720 գծմ ջրթափ խողովակների տեղադրման աշխատանքներ:








Մեր մանուկների համար

Կառուցվել, վերակառուցվել, բարեկարգվել և նոր տեսք են ստացել մանկական խաղահրապարակները.

- Մոլդովական 28 շենքի հարակից տարածք,
- Լվովյան 15 շենքի հարակից տարածք,
- Հիմնանորոգվել են Երևանի Լեփսիուսի անվան հ. 88 հիմնական դպրոցը, Երևանի Աշոտ Ղուլյանի անվան մանկապատանեկան մարզատեխնիկական կենտրոնը, Երևանի Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոցը, հ.99 մանկապարտեզի տանիքը, դիմապատը ու դռները, հ.105 մանկապարտեզի տանիքը, 6-րդ զանգվածում կառուցվել է կասկադատիպ համալիր:






Վերակառուցվել և բարեկարգվել է 29 բակային տարածք, տեղադրվել է 19 մանկական խաղ, 48 մարզասարք, 16 զրուցարան, 105 նստարան, հիմնանորոգվել է 4 աստիճանահարթակ, Մոլդովական 6/1 շենքի հարևանությամբ կառուցվել է մինի ֆուտբոլի դաշտ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ», «ԵՐԵՎԱՆ ՋՈՒՐ», «ԵՐԵՎԱՆ ԳԱԶ» ՓԲԸ-ՆԵՐԻ ՀԵՏ

- «ՀԵՑ» ՓԲ ընկերության հետ համագործակցության արդյունքում կատարվել են բազմաբնակարան շենքերի 36 մուտքերի էլեկտրաէներեգիայի մատակարարման համակարգի վերանորոգման աշխատանքներ,
- «Երքաղլույս» ՓԲ ընկերության հետ համագործակցության արդյունքում վերականգնվել է Սաֆարյան փողոցի արտաքին լուսավորության ցանցը,
- «Երևան Ջուր» ՓԲ ընկերության հետ համագործակցության արդյունքում կատարվել են 5-րդ զանգվածի Գալշոյան փողոցի սկզբնամասի շենքերը սնուցող ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքներ: Կոյուղատար համակարգի 400 գծմ և 23 դիտահորերի վերանորոգման աշխատանքներ:





ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ



Զինվորի ընտանիքի կողքին

«Այցելություն զինծառայողին» ծրագրի շրջանակներում Նոր Նորք վարչական շրջանից 100-ից ավելի ծնողներ այցելել են ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ զորամասերում ծառայող իրենց զավակներին:

Մեր պարտքն է լինել նրանց կողքին

Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին և երեխաներին.

- 936 ընտանիքի ցուցաբերվել է դրամական աջակցություն,
- 82 ընտանիքի տրամադրվել է հագուստ,
- 30 ընտանիք ստացել է վառելափայտ,
- սգո արարողությունների համար աջակցություն է ստացել 48 ընտանիք,
- աջակցություն է ցուցաբերվել Արցախյան պատերազմի մասնակից 50, կին-ազատամարտիկներ 10, սոցիալապես անապահով 1 050 և սիրիահայ 37 ընտանիքի,
- 630 շահառու օգտվում է բարեգործական ճաշարանից:








- 22 մանկապարտեզների ավագ խմբերի **1 316** երեխա որպես նվեր ստացել է դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ,
- սոցիալապես անապահով ընտանիքների 2-4-րդ դասարանների շուրջ **570**, ինչպես նաև սիրիահայ 10 երեխայի հատկացվել են դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ:










- Կազմակերպվել է Նոր Նորքի սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 250 երեխաների հանգիստը բակային ճամբարներում, 100 երեխաների հանգիստը Ծաղկաձորի «Աղբյուր» ճամբարում:
- Ամանորյա տոների առթիվ սոցիալապես անապահով շուրջ 2 000 ընտանիքի տրամադրվել են սննդի փաթեթներ:





«Էրեբունի-Երևան 2798» փոնակատարության սոցիալական բաղադրիչի շրջանակում Երևանի քաղաքապետի նախաձեռնությամբ վարչական շրջանի սոցիալապես անապահով 286 ընտանիքի տրամադրվել է աջակցություն (անհրաժեշտ կենցաղային տեխնիկա):

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ




Նախադպրոցական հիմնարկների վերանորոգում, հիմնանորոգում
Երևանի 2016թ. շինբարեկարգման ծրագրով հիմնանորոգվել են հ.99 մանկապարտեզի տանիքը, դիմապատերը, փոխվել են դռներն ու պատուհանները: Հիմնանորոգվել է հ.105 մանկապարտեզի տանիքը:

- Բարերարների և կազմակերպությունների աջակցությամբ վերանորոգվել է հ. 117 մանկապարտեզի խոհանոցը, պահեստը և դահլիճը, փոխվել են առաջին և երկրորդ հարկերի միջանցքների պատուհանները:
- Վերանորոգվել է հ.101 մանկապարտեզի մեկ սանհանգույցը, սպասք լվանալու սենյակը, խմբասենյակների խոհանոցային հատվածները համալրվել են նոր գույքով՝ 9 պահարան, 4 լվացարան՝ չորանոցներով:
- Հ.114 մանկապարտեզում վերանորոգվել են մեթոդ-կաբինետը, մարզադահլիճը, մանկապարտեզի դիմապատը, փոխվել է մուտքի դուռը, մանկապարտեզին նվիրաբերվել է նաև նոր գույք՝ 9 պահարան, 1 պրոյեկտոր, էլեկտրական մսաղաց:
- Նոր Նորք վարչական շրջանի աջակցությամբ վերանորոգվել է հ.102 մանկապարտեզի տանիքը՝ 600 մ^2, ասֆալտապատման աշխատանքներ են իրականացվել հհ.99, 105, 110 մանկապարտեզների բակային տարածքներում:
- Հ.112 մանկապարտեզի 6 խմբասենյակի համար ձեռք են բերվել ջրատաքացուցիչներ, խմբասենյակի և պահեստի համար՝ օդորակիչ:
- Նոր Նորքի մանկապարտեզները 2016թ.ծրագրով համալրվել են նոր գույքով՝ մանկական աթոռ՝ 638 հատ, մանկական սեղան՝ 155 հատ, եռահարկ մահճակալ՝ 154 հատ, երկհարկանի մահճակալ՝ 175 հատ, սառնարան՝ 10 հատ:





Նոր Նորքի թվով 22 մանկապարտեզի 139 խմբում երեխաների ցուցակային թիվը միջին հաշվարկով 4290 է:

Թվով 22 մանկապարտեզներում կազմակերպվել են ծրագրով նախատեսված միջոցառումները:






Վարչական շրջանի ղեկավար Արմեն Ուլիխանյանի նախաձեռնությամբ աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի կողմից կազմակերպվել են Ամանորին, Մայրության և գեղեցկության տոնին, Հաղթանակի օրվան Հունիսի 1-ի և «Էրեբունի-Երևան 2798» տոնակատարություններին նվիրված զանգվածային միջոցառումներ, որոնցում ընդգրկվել են բոլոր ուսումնական հաստատությունները:











Մշակութային օջախների գործունեությունը թվերով

Մշակութային կենտրոններ հաճախող երեխաների ցուցակային թիվը միջին հաշվարկով·

- Ս. Ասլամազյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցում՝ 435,
- Հ. Դանիելյանի անվան արվեստի դպրոցում՝ 701,
- Նոր Նորքի մշակույթի կենտրոնում՝ 320,

ուսումնամեթոդական, գիտաարտադրական կենտրոնում՝ 316:

- Նոր Նորք վարչական շրջանում կազմակերպվել են պետական տոների և հիշատակի օրերի հետ կապված զանգվածային միջոցառումներ, հոբելյանական, գրական-երաժշտական ցերեկույթներ:








Մեծ շուքով նշվել են Ամանորը, Բանակի 24-րդ տարեդարձը, Տեառնընդառաջը, Սուրբ Սարգսի տոնը, Գիրք նվիրելու, Մայրենի լեզվի միջազգային օրերը, Բուն Բարեկենդանը, պոեզիայի և թատրոնի միջազգային օրերը, հումորի միջազգային օրը, Մայիսյան եռատոնը, Համբարձման տոնը, Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրը, Խաղողօրհնեքը, Գիտելիքի օրը, ՀՀ Անկախության օրը, Ուսուցչի տոնը, Տարեցների օրը, Էրեբունի-Երևան 2798-ամյակը, Գիտության, Ուսանողության, Երիտասարդության տոները:






«Երևանյան ամառ -2016» ծրագրի շրջանակներում կազմակերպվել են ավելի քան 22 բակային միջոցառում, ինտելեկտուալ խաղ - մրցույթներ, ցուցահանդեսներ, այցելություններ են կազմակերպվել Հայաստանի պատմական վայրեր, թանգարաններ, ցուցասրահներ:




Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի նախաձեռնությամբ կազմակերպվել են ֆլեշմոբեր, համաքաղաքային շաբաթօրյակներն ու ծառատունկերը ուղեկցվել են մշակութային գեղեցիկ ծրագրերով:

ՍՊՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

2016թ. հիմնանորոգվել են Երևանի Աշոտ Ղուլյանի անվան մանկապատանեկան մարզատեխնիկական կենտրոնը, Երևանի Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոցը, ավարտվել են Երևանի Տորք Անգեղ մարզամշակութային կենտրոնի հիմնանորոգման աշխատանքները:





Սպորտդպրոց հաճախող երեխաների ցուցակային թիվը միջին հաշվարկով.

- Աշոտ Ղուլյանի անվան մանկապատանեկան, մարզատեխնիկական կենտրոնում՝ 308,
- Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոցում՝ 400,
- Երևանի Տորք Անգեղ մարզամշակութային կենտրոնում՝ 720,
- Նոր Նորքի շախմատի մանկապատանեկան մարզադպրոցում՝ 218:

Վարչական շրջանում կազմակերպվել են զանգվածային, առողջարարական, մարզական ու երիտասարդական միջոցառումներ.

- ՀՀ Անկախության 25-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 25-րդ մարզական խաղերը,
- Ազգային ժողովի գավաթի խաղարկության մրցումները,
- «Լավագույն մարզական ընտանիք» 2016թ. մրցույթը,
- «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» 2016թ. համաքաղաքային բակային ավանդական փառատոնը,
- 2016թ. նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերը,
- ներշրջանային տարբեր մրցումներ, սպորտլանդիաներ: Նոր Նորքի մարզիկները հաջողությամբ մասնակցել են նաև միջազգային տարբեր մրցույթների. լավագույնները խրախուսվել են վարչական շրջանի ղեկավարի կողմից:










2016թ. սոցիալապես անապահով քաղաքացիներին տրամադրվել է 75 միջնորդագիր՝ պետպատվերի շրջանակներում բժշկական ծառայություններից օգտվելու համար, քաղաքապետարանի կողմից թվով 68 առողջարանային ուղեգիր՝ «Ջերմուկ», «Գանձաղբյուր» և «Վանաձոր» առողջարաններում հանգստանալու համար:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

- 2016թ. հոկտեմբերի 8-ին Երևանի Նոր Նորք վարչական շրջանի և Նովոսիբիրսկ քաղաքի Կենտրոնական շրջանի միջև ստորագրվել է համագործակցության վերաբերյալ համաձայնագիր՝ փորձի փոխանակման և ձևավորված համագործակցության զարգացման նպատակով:
- Շարունակվել են Նոր Նորք վարչական շրջանի և Կանադայի Տորոնտո քաղաքի միջև ձևավորված համագործակցության ծրագրերը:
- Նոր Նորք վարչական շրջանում հաջողությամբ իրականացվել է «Արի տուն-2016» ծրագիրը:
- Արտաքին կապերի ընդլայնման նպատակով կազմակերպվել են աշխատանքային կարևոր հանդիպումներ և քննարկումներ տարբեր երկրների ներկայացուցիչների հետ:










2016

ՆՈՐ ՆՈՐՔ

ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Թեժ գիծ՝

+(374 11) 518-688

nor_norq@yerevan.am



www.yerevan.am